ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/152

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, էլեկտրական ապրանքների և սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.04.2022թ.-ի թիվ 26/26-1/5687-2022 գրությամբ «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 28.03.2022թ. թիվ Ե/ՎՈՒ/576-22 գրության հիման վրա, 04.04.2022թ.-ին «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 04.04.2022թ.-ին:

06.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/152 համարի ծածկագիրը:

13.04.2022թ.-ին և 22.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.04.2022թ.-ին:

2. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 28.03.2022թ. թիվ Ե/ՎՈՒ/576-22 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2022թ-ի նոյեմբերի 14-25-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի է ունեցել էլեկտրական ապրանքների և սարքերի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/32 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

Ընթացակարգի շրջանակում հայտ ներկայացրած «ՀԱՅԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼԻ» Ա/Ձ-ի (ՀՎՀՀ՝ 40047626, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Ֆրիկի 3, հեռ.՝ +37443426302; էլ. փոստի հասցե՝ hayk.nersisyan@inbox.ru) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ի

կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության փաստաթուղթը թերի է և չի համապատասխանում սույն գնման Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ բացակայում է մասնակցի բանկային հաշվեհամարի և ռուսերեն լեզվով անվանման վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 21.03.2022թ-ին eAuction համակարգի միջոցով՝ ծանուցմամբ «ՀԱՅԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼԻ» Ա/Ձ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները և https://eauction.armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնել շտկված փաստաթղթերը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ՀԱՅԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼԻ» Ա/Ձ-ի կողմից 24.03.2022թ-ի դրությամբ և https://eauction.armeps.am համակարգի միջոցով շտկված փաստաթուղթ չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀԱՅԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼԻ» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «ՀԱՅԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼԻ» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 06.04.2022թ.-ի գրությամբ դիմել է «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.04.2022թ.-ի թիվ 26/26-1/5687-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 18.04.2022թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի կողմից հայտարարված «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով էլ. աճուրդին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության՝ «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես նշված չէ բանկային հաշվեհամարը և ռուսերեն անվանման վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Արդեն համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն 25.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 13-րդ էջի՝ մասնակցի կողմից սահմանված մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի կողմից հայտարարված «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով էլ. աճուրդին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության՝ «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես նշված չէ բանկային հաշվեհամարը և ռուսերեն անվանման վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Արդեն համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն 25.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 13-րդ էջի՝ մասնակցի կողմից սահմանված մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

Նախ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 14.03.2022թ., մինչդեռ մինչև 21.04.2022թ.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի հրավիրել հայտերի բացման նիստ, չի կազմել հայտերի բացման արձանագրություն և չի հրապարակել հայտերի բացման արձանագրությունը տեղեկագրում: Մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը իմպերատիվ սահմանում է, որ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Իսկ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակվի տեղեկագրում:

Միևնույն ժամանակ՝ անհասկանալի պայմաններում անհամապատասխանություն-ների շտկման վերաբերյալ ծանուցում ուղարկվել է մասնակցին միայն 21.04.2022, մինչդեռ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը իմպերատիվ կերպով սահմանում է, որ, եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհա¬մա¬պատաս¬խան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Մինչդեռ Ա/Ձ-ն մինչև հայտերի բացման հաջորդող օրը սպասելով և տեսնելով, որ չկա որևէ անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման ծանուցում կամ որևէ արձանագրություն, որը Ա/Ձ-ին կհուշեր, որ գնահատող հանձնաժողովը կասեցրել է գնահատման նիստը և արդյունքերը կհրապարակվեն մի քանի օրից՝ այլևս չի էլ պատկերացրել, որ գնահատող հանձնաժողովը խախտելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի իրավապարտադիր դրույթը՝ շտկման ծանուցում կուղարկի 21.04.2022:

Եվ վերջապես գլխավորի մասին՝ գնահատող հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությամբ որոշվել է, որ բանկային հաշվեհամարը և ռուսերեն անվանման վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը հայտում չի նշվել՝ դիտարակել դա որպես անհամապատասխանություն և արդյունքում նաև մերժել տվյալ ինֆորմացիաները չշտկելու հիմքով, այս մասով հայտնում ենք, որ «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ն իսկզբանե

eauction-ում գրացվելով՝ ինքնստինքյան լրացնում է Ա/Ձ-ի տվյալները, ռեկվիզիտները, բանկային տվյալները և որ ամենակարևորն է բոլոր ինֆորմացիաները լրացվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Արդյունքում՝ մեր կարծիքով վերը նշված հանգամանքը չէր կարող գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեր որպես անհամապատասխանություն /կցվում է/:

Այս պարագայում գտնում ենք, որ Ընկերությունից ոչ կախված հանգամանքը հանգեցրել է ոչ միայն «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը մերժելուն, այլ նաև մեծ աշխատանքային փորձ ունեցող ընկերությունը այսօր կանգնել է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակումում ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2022/152 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից էլեկտրական ապրանքների և սարքերի ձեռքբերման նպատակով 07.03.2022թ.-ին հայտարարվել է «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և բացման վերջնաժամկետ է սահմանված եղել 14.03.2022թ.-ի ժամը 14:45-ը:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ն:

iv. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ

բավարարում է «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից ներկայացնելով «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.03.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 16.03.2022թ.-ին Հանձնաժողովն արձանագրել է, որ «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության փաստաթուղթը թերի է և չի համապատասխանում գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ բացակայում է մասնակցի բանկային հաշվեհամարի և ռուսերե լեզվով անվանման վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ին՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխա-նությունները:

vii. Հանձնաժողովի 25.03.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 24.03.2022թ.-ին Հանձնաժողովն արձանագրել է, որ «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետներում համակարգի միջոցով չի ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.04.2022թ.-ի թիվ 26/26-1/5687-2022 գրությամբ «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները...:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ

կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ-ի կողմից էլեկտրական ապրանքների և սարքերի ձեռքբերման նպատակով 07.03.2022թ.-ին հայտարարված «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն

հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից էլեկտրական ապրանքների և սարքերի ձեռքբերման նպատակո 07.03.2022թ.-ին հայտարարված «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.03.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն Հանձնաժողովի 25.03.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ 24.03.2022թ.-ին արձանագրվել է, որ սահմանված ժամկետում «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկումները չեն կատարվել, ինչով

պայմանավորված՝ 25.03.2022թ.-ին, որոշում է կայացվել Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք

ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման

անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Անդրադառնալով Մասնակցի կողմից 18.04.2022թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի խախտման իրավական ու փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված դրույթն իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատումը հանձնաժողովն իրականացնում է հայտի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում, այլ ոչ թե բացման նիստում:

Ընդ որում՝ մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում գնահատում իրականացնելը ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականությունների կանխարգելմանը և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում այն ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը, և վերջապես՝ հետապնդում է իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.04.2022թ.-ի թիվ 26/26-1/5687-2022 գրությամբ «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-LO-2022/152 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Հայկ Ներսիսյան Մանվելի» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**